

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 մարտի 2013թ.



Հավելված 8

«Ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման հրահանգը» Հավելվածի
31/03/2013թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Սույն ծանոթագրությունները ներառում են տեղեկատվություն՝ ի լրումն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության:

Ծանոթագրություն 1. «Կորպորատիվ տեղեկատվություն»

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերությունը) պետական գրանցում է ստացել որպես փակ բաժնետիրական ընկերություն 20.05.2008թ-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրական ծառայություններ: Ընկերությունը իր գործունեությունը սկսել է 2008թ հունիսից:

Իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1

1.1. Կառավարման մարմինները.

Ընկերության կառավարման մարմիններն են՝

Բաժնետերերի Ընդհանուր ժողովը,

Ընկերության Խորհուրդը,

Գործադիր Տնօրենը:

Ընկերության Գործադիր Տնօրենն է Գագիկ Գրիգորյանը:

Ընկերության խորհուրդը կազմված է 6 անդամից:

Ընկերության խորհրդի կազմը **2013թ. մարտի 31-ի** դրությամբ՝

Ղանիլ Խաչատուրով - Խորհրդի նախագահ

Իգոր Միրովսկի – Խորհրդի անդամ

Ալեքսանդր Մոզալև - Խորհրդի անդամ



Ռաֆայել Սինասբեկյան – Խորհրդի անդամ

Ալիսաս Սանգուլիա - Խորհրդի անդամ

Սոնա Դալայան – Խորհրդի անդամ

1.2. Ընկերության ղեկավարների վարձատրությունը.

Ընկերության խորհրդի անդամների վարձատրության չափը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի և ներքին աուդիտի անդամների վարձատրության չափը և պայմանները հաստատվում են Ընկերության խորհրդի կողմից:

Ընկերության այլ ղեկավարների և աշխատակիցների վարձատրության պայմանները հաստատվում են Ընկերության գործադիր տնօրենի կողմից:

Ծանոթագրություն 2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

Համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված դեռևս առկա են անորոշություններ ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի առումով, ինչը կարող է հանգեցնել արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել



Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացմանը: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ճշգրտվել դրանց հնարավոր ազդեցությամբ:

3. Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

3.1. Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

3.2. Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը



(այսուհետ՝ ՋՋ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՋՋ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՋՋ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4. Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

3.5. Ընկերության կողմից նոր ստանդարտների ընդունում

Ընկերությունն կիրառում է իր գործունեության համար համապատասխան և 2011թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՍԽ») և ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից: Այն ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք ունեցել են ազդեցություն ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված են ստորև.

ՖՀՄՍ 1 (փոփոխություն) Սահմանափակ ազատում ՖՀՄՍ 7-ի համեմատական բացահայտումներից. ՖՀՄՍ առաջին անգամ կիրառողների համար ՖՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունը թույլ է տալիս այն առաջին անգամ կիրառողներին ազատվել այն համադրելիներից, որոնք հասանելի են նրանց, ովքեր արդեն օգտագործում են ՖՀՄՍ-ները՝ բարելավումներ ֆինանսական գործիքների վերաբերյալ բացահայտումներն (ՖՀՄՍ 7 փոփոխություններ) առաջին անգամ կիրառելիս: Ուժի մեջ է 2010թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:



Տարեկան բարեփոխումներ 2010

ՖՀՄՍ 7 (Փոփոխություն) Ֆինանսական գործիքներ. Բազահայտումներ

Փոփոխությունը պարզաբանում է ֆինանսական գործիքների բազահայտման պահանջները՝ վերացնելով անհամապատասխանությունները և կրկնվող բազահայտումները: Մասնավորապես, վերացվում են բազահայտման ենթակա հետևյալ պահանջները.

- ֆինանսական ակտիվների մնացորդային արժեքները, որոնց պայմանները վերանայվել են և որոնք այլապես կլինեին ժանկետանց կամ արժեզրկված,
- պարտքային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական այն գործիքների համար, որոնց հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց՝ պարտքային ռիսկի ենթարկվածության առավելագույն չափը,
- ժանկետանց կամ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով պահվող գրավների իրական արժեքի գնահատումը և նկարագրությունը:

Այս փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 1 (Փոփոխություն) Ֆինանսական հաշվետվությունների ներկայագում

Պարզաբանում է, որ կազմակերպություններն այլ համապարփակ եկամտի յուրաքանչյուր բաղադրիչի համար պահանջվող համադրումները կարող են ներկայացնել, կան սեփական կապիտալում փոփոխությունների հաշվետվության մեջ, կան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 34 (Փոփոխություն) Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

Փոփոխությունն ավելացնում է ֆինանսական գործիքների իրական արժեքի և դասակարգման վրա ազդող հանգամանքների, իրական արժեքի հիերարխիայի



մակարդակների միջև ֆինանսական գործիքների փոխանցումների, ֆինանսական ակտիվների դասակարգման փոփոխությունների և պայմանական պարտավորություններում և ակտիվների փոփոխությունների վերաբերյալ բացահայտման պահանջները: ՀՀՄՍ 34 փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Պահանջվող հավելյալ բացահայտումները կներկայացվեն Ընկերության միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում:

3.6. Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Դեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխություններն ու մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև: Թողարկվել են նաև այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ըստ կանխատեսման էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 7 (փոփոխություններ) Ֆինանսական ակտիվների փոխանցում

Փոփոխության նպատակն է օգնել ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին գնահատելու ֆինանսական ակտիվների գծով բարդ փոխանցումների ռիսկայնությունը և այս ռիսկերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի վրա: Պահանջվող լրացուցիչ բացահայտումները նախատեսված են տեղեկատվության տրամադրման համար, որոնք թույլ են տալիս օգտագործողներին՝



- Հասկանալ ոչ ամբողջապես ապաճանաչվող փոխանցված ֆինանսական ակտիվի և դրա հետ կապված պարտավորության միջև հարաբերությունը,
- Գնահատել ամբողջապես ապաճանաչված ֆինանսական ակտիվներում հաշվետու կազմակերպության անընդհատ ներգրավվածության հետ կապված ռիսկերը և դրանց բնույթը:

Այս փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 32 (փոփոխություն) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները ներառում են կիրառման ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՍ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.

- «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը՝ փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի կազմակերպության բնականոն գործունեության ընթացքում, կազմակերպության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

- Քանի որ գործնականում ՀՀՄՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՍ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2014թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և ենթակա են հետընթաց կիրառման:



ՖՅՄՍ 7 (փոփոխություն) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Փոփոխությունը հավելում է ՖՅՄՍ 7-ի որակական և քանակական բացահայտումներ կապված ճանաչված ֆինանսական գործիքների զուտ և համախառն գումարների հետ, որոնք ա) հաշվանցվել են ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ, բ) ենթակա են կատարման հիմնական հաշվանցման պայմանավորվածության կամ նմանատիպ համաձայնագրերի ներքո, եթե նույնիսկ հաշվանցված չեն ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ:

Փոփոխությունները կիրառելի են 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և ենթական են հետընթաց կիրառման:

ՖՅՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

ՀՀՄՍԽ-ն նպատակ ունի փոխարինել ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը», ամբողջապես: Փոխարինող ստանդարտը (ՖՅՄՍ 9) թողարկվում է փուլերով: Մինչ այսօր, լույս են տեսել ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման, դասակարգման, չափման և ապաճանաչման գլուխները: Արժեզրկման մեթոդոլոգիայի և հեջավորման հաշվառման հետ կապված գլուխները դեռ մշակման փուլում են:

ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՅՄՍ 9-ի փոփոխություն, որով ՖՅՄՍ-ի կիրառման պարտադիր ժամկետը հետաձգվել է 2013թ-ի հունվարի 1-ից մինչև 2015թ-ի հունվարի 1-ը: Սա նշանակում է, որ ՀՀՄՍ 39-ի փոխարինման ծրագրի բոլոր փուլերը այժմ կունենան միևնույն պարտադիր կիրառման ժամկետը: Փոփոխությունները նաև ազատում են համեմատական ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման պահանջից ՖՅՄՍ 9-ի կիրառման համար: Այս ազատումը նախկինում հասանելի էր միայն այն ընկերություններին, որոնք նախընտրում են կիրառել ՖՅՄՍ 9-ը մինչև 2012թ.: Այժմ կպահանջվեն նաև հավելյալ անցումային բացահայտումներ՝ ստանդարտի առաջին անգամ կիրառման ընկալմանն օժանդակելու համար:

Ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը ԸՆկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:



ՖՅՄՍ 13 Իրական արժեքի չափումը

ՖՅՄՍ 13-ը չի ազդում նրա վրա, թե որ ակտիվները պետք է չափվեն իրական արժեքով, սակայն հստակեցնում է իրական արժեքի սահմանումը և տրամադրում է իրական արժեքի չափման վերաբերյալ ուղեցույց և ընդլայնված բացահայտումներ: Այն ուժի մեջ կմտնի 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները պահանջում են կազմակերպությանը այլ համապարփակ եկամուտներում ներկայացված տարրերը խմբավորել այնպիսի խմբերի, որոնք մնացած ՖՅՄՍ-ների համաձայն. ա) հետագայում չեն վերադասակարգվելու շահույթի կամ վնասի և բ) հետագայում վերադասակարգվելու են շահույթի կամ վնասի, երբ առաջանան որոշակի պայմաններ: Այն ուժի մեջ կմտնի 2012թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ սա կփոխի այլ համապարփակ եկամուտների տարրերի ընթացիկ ներկայացումը, սակայն չի ազդի դրանց չափման և ճանաչման վրա:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական «Ֆինանսական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1. Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա: Ապահովագրական ռիսկը



նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը ցանկացած սցենարի (ընթացքի) դեպքում կարող էր ապահովագրողի կողմից նշանակալի լրացուցիչ հատուցումների վճարման պատճառ դառնալ, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն կոմերցիոն բովանդակություն (այսինքն՝ գործարքի տնտեսական կողմի վրա նշմարելի ազդեցություն չունեն): Վերը նշված լրացուցիչ հատուցումները վերաբերում են այն գումարներին, որոնք գերազանցում են ապահովագրական պատահարի տեղի չունենալու դեպքում վճարվելիք գումարները:

Ապահովագրության պայմանագրերը կարող են նաև փոխանցել ֆինանսական ռիսկ: Ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, ֆինանսական գործիքի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագրի մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

Ճանաչում և չափում

Համախառն ապահովագրավճարներ

Համախառն ապահովագրավճարներն ընդգրկում են պայմանագրով նախատեսված ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր ստացվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Համախառն ապահովագրավճարները ընդգրկում են միջնորդներին վճարվելիք միջնորդավճարները, և չեն ներառում ապահովագրավճարների գծով հարկերը և այլ պարտադիր վճարները:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ



Չվաստակած ապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված ապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակված ապահովագրավճարների պահուստ:

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները ընդգրկում են պայմանագրով նախատեսված ծածկույթի ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր վճարվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակած վերաապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված վերաապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերվում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է՝ որպես չվաստակված ապահովագրավճարների համախառն պահուստում վերաապահովագրողների մասի փոփոխություն:

Ապահովագրական հատուցումներ

Համախառն հատուցումները բաղկացած են ապահովադիրներին վճարված հատուցումներից, ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների գնահատականների փոփոխություններից, կարգավորման ներքին և արտաքին ծախսերից: Հատուցումները ճանաչվում են դրանց ներկայացման պահին:

Համախառն հատուցումներում վերաապահովագրողների մասը

Հատուցումներում վերաապահովագրողների մասը ճանաչվում են այն ժամանակ, երբ դրանց գծով համախառն ապահովագրական հատուցումը ճանաչվում է համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

Վերաապահովագրության միջնորդավճարներից եկամուտ

Ստացված կամ ստացվելիք վերաապահովագրության միջնորդավճարները, որոնք չեն պահանջում ընկերությունից հավելյալ ծառայությունների մատուցում, ընկերության



կողմից ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան պոլիսների ուժի մեջ մտնելու կամ վերակնքման պահին: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի հետագա ծառայությունների մատուցում, ապա միջնորդավճարը, կամ դրա մի մասը, հետաձգվում է և ճանաչվում որպես եկամուտ այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվում են ծառայությունները:

Ձեռքբերման ծախսեր

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի համար, երբ դրանք տեղի են ունեցել:

Ձեռքբերման ծախսերն ընդգրկում են ուղղակի ծախսեր, ինչպիսիք են օրինակ միջնորդավճարները և բժշկական վճարները: Ձեռքբերման ծախսերի մի մասը հետաձգվում է հետագա հաշվապահական ժամանակաշրջանների համար այդ հետագա ժամանակաշրջաններ հետաձգված ապահովագրավճարներին համապատասխանելու համար: Ձեռքբերման ծախսերի հետաձգումը հաշվարկվում է՝ յուրաքանչյուր պայմանագրի գծով ձեռքբերման ծախսի վրա կիրառելով չվաստակած ապահովագրավճարների և գրանցված ապահովագրավճարների հարաբերակցությունը:

Ապահովագրական պարտավորություններ գծով պարտավորությունները

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ պայմանագրերը ուժի մեջ են մտնում: Այս

պարտավորությունները հայտնի են որպես չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՛ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ակնկալվող սուբրոգացիոն և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորությունը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով ստանդարտ ակտուարական պահանջների կանխատեսման մեթոդները, որոնք հիմնվում են էմպիրիկ



տվյալների և ընթացիկ ենթադրությունների վրա, որոնք կարող են ներառել բացասական շեղման մարժա: Պարտավորությունը չի զեղչվում փողի ժամանակային արժեքով: Հավասարակշռման և աղետների պահուստ չի ճանաչվում:

Պարտավորություններն ապաճանաչվում են, երբ պայմանագրային պարտավորությունները կատարվում են կամ այն դադարում է:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը իրենից ներկայացնում է ապահովագրավճարների այն մասը, որը ակնկալվում է ստացվել հետագա ժամանակաշրջանների ընթացքում:

Սովորաբար պահուստը նվազեցվում է պայմանագրի ժամկետի ընթացքում և ճանաչվում է որպես ապահովագրավճարներից եկամուտ:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին գնահատում է, թե արդյոք իր կողմից ճանաչված ապահովագրության պարտավորությունները համարժեք են՝ օգտագործելով իր ապահովագրության պայմանագրերի ներքո ապագա դրամական միջոցների հոսքերի ընթացիկ գնահատումները: Եթե այդ գնահատումը ցույց է տալիս, որ իր ապահովագրական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները) համարժեք չեն գնահատված՝ ապագա դրամական միջոցների հոսքերի հետ համեմատած, ապա ամբողջ պակասուրդը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Վերաապահովագրություն

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկը իր սովորական գործունեության ընթացքում՝ բոլոր դասերի գծով: Վերաապահովագրության գծով ակտիվները ներկայացնում են վերաապահովագրող ընկերություններից ստացվելիք գումարները:

Վերաապահովագրության գծով ակտիվները վերանայվում են արժեզրկման համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, երբ հաշվետու տարվա ընթացքում առաջանում է արժեզրկման հայտանիշ: Արժեզրկումն առաջանում է այն ժամանակ, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ վերաապահովագրական ակտիվի ճանաչումից հետո Ընկերությունը կարող է չստանալ բոլոր ստացվելիք գումարները, որոնք պետք է վճարվեն համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն և



այդ իրադարձությունն ունի արժանահավատորեն չափելի ազդեցություն այն գումարների վրա, որոնք ընկերությունը ստանալու է վերաապահովագրողից: Արժեզրկման կորուստը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերաապահովագրության ձեռքբերման գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ձեռքբերման օրվա դրությամբ և չեն անորոտիզացվում: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում ընկերությանը ապահովադիրների նկատմամբ իր պարտավորություններից: Վերաապահովագրության գծով պարտավորություններ են հանդիսանում վերաապահովագրող ընկերություններին վճարվելիք գումարները: Վճարվելիք գումարները գնահատվում են համապատասխան վերաապահովագրության պայմանագրերի համաձայն: Ապահովագրավճարները և պահանջները ներկայացվում են համախառն հիմքով՝ ստանձնած և փոխանցված վերաապահովագրության համար: Վերաապահովագրության գծով ակտիվները և պարտավորությունները ապաճանաչվում են, երբ պայմանագրային իրավունքները կատարվում են, կամ, երբ պայմանագիրը փոխանցվում է այլ կողմի:

4.2. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Ապահովագրության պայմանագրերին չվերաբերող եկամուտների և ծախսերի ճանաչման չափանիշները ներկայացված են ստորև:

Ջուտ առևտրային եկամուտ

Ջուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող լուրջ եկամուտները և ծախսերը: Ջուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը:

Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամուտը բաղկացած է շահաբաժիններից, տոկոսային եկամուտից, պարտքային արժեթղթերի և այլ վարկերի և դեբիտորական պարտքերի անորոտիզացված արժեքի փոփոխություններից:



Տոկոսային եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.3. Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին



հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

2013թ. մարտի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում հրապարակված հետևյալ փոխարժեքները՝

ISO	Երկիր	ՀՀ դրամ
USD	1 ԱՄՆ Դոլլար	418.58
EUR	1 Եվրո	536.54
GBP	1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգ	636.07
CHF	1 Շվեյցարական ֆրանկ	440.84
JPY	10 ճապոնական իեն	44.50
RUR	1 Ռուսական ռուբլի	13,46

4.4. Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային վճարումները, ապա հարկվող շահույթը կամ կորուստը հիմնվում են մոտավոր թվերի վրա:

Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ դիրք հարկային օրենսդրությունն արտածելու և հարկային հաշվարկները վերանայելու համար: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և



ստուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես հաջորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

4.5. *Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են կանխիկ դրամը և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:



Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են անորոշիզացված արժեքով:

4.6. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7. Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառյալ նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են անորոշիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ընկերությունը սահմանում է իր ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչումից հետո և



անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ կատարում է վերագնահատում յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Այնուհետև դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով: Դեբիտորական պարտքերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ,

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք եականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով:

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից օգուտը և վնասը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում:



Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչ մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստներ:

4.8. Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ Ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա



հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե հետագա ժամանակաշրջանում, արժեզրկումից կորուստը նվազում է և այդ նվազեցումը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկման ճանաչումից հետո առաջացող որևէ իրադարձության հետ, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է: Արժեզրկումից կորստի որևէ հետագա հակադարձում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է հակադարձման ամսաթվով իր հակադարձված արժեքին:

4.9. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն անողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Ընկերության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Ընկերության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:



Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Հիմնական միջոցները

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած նրանց կուտակված մաշվածությունը:

Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքը ներառում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և այլ պարտադիր վճարները և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված այլ ծախսումները: Ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից: Հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ճանաչվում են որպես ակտիվ միայն այն դեպքում, երբ դրանք բարելավվում են ակտիվի վիճակը՝ բարձրացնելով նրա սկզբնապես գնահատված ցուցանիշները: Եթե հիմնական միջոցների միավորի հաշվեկշռային արժեքը արդեն արտացոլում է տնտեսական օգուտների կորուստը, ապա հետագա ծախսումները, որոնք ուղղված են ակտիվից ակնկալվող տնտեսական օգուտների ստացումը վերականգնելուն, կապիտալացվում են այն պայմանով, որ հաշվեկշռային արժեքը չգերազանցի ակտիվի փոխհատուցվող գումարը: Մյուս բոլոր հետագա ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր: Հիմնական միջոցների մաշվածությունը հաշվառվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության ժամկետներ են ընդունվում Շահութահարկի մասին ՀՀ օրենքով սահմանված նորմերից ոչ պակաս ժամկետները: Մաշվածության գումարները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրը: Ընկերությունում սահմանվում են հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները:



Խմբի անվանումը	Մաշվածության նվազագույն ժամկետը (տարի)	Մաշվածության Տոկոսադրույք
Տրանսպորտային միջոցներ	5	20
Տնտեսական գույք և գործիքներ	5	20
Համակարգչային տեխնիկա	3	33.3
Այլ հիմնական միջոցներ	5	20

4.11 Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության ոչ նյութական ակտիվները գնահատվում են սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը սահմանվում է հաշվի առնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետները: Այն դեպքում, երբ անհնարին է որոշել ոչ նյութական ակտիվների հնարավոր օգտագործման ժամկետները, ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 10 տարի:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների միավորները ապաճանաչվում են, եթե դրանք իրացվում են կամ ընդմիջտ հանվում են օգտագործումից, և հետագա օտարումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների միավորների դուրս գրումից կամ իրացումից առաջացած արդյունքը պետք է որոշվի որպես ակտիվի իրացումից զուտ նուտքերի (հասույթի) և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ճանաչվի որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գույքագրումն անցկացնում է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ:

4.12. Վարձակալություն

Գործառնական վարձակալություն – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների արձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Ներգրված միջոցներ



Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններ, թողարկված արժեթղթեր և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.14. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.15. Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Գնված սեփական բաժնետոմսեր

Երբ ընկերությունը գնում է Ընկերության բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմին կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում: Գնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.16. Հաշվանցում



Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

4.17. Աշխատակիցների հատուցումների հաշվառումը վարվում է ՀՀՍՍ 19 ստանդարտով սահմանված չափանիշների համաձայն, ինչպես նաև այդ փոխհարաբերությունները կարգավորող այլ նորմատիվային և իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

Յուրաքանչյուր ամսվա վերջում հաշվարկվում է արձակուրդային գումարների վճարման պահուստ: Հաշվետու տարվա վերջում պահուստը վերահաշվարկվում է:

Ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին զուտ հատկացումներ

Ընկերության բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից ելնելով ձևավորվում է ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 25.05.08թ. թիվ 73 Ն որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխան:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՍՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի համար գնահատումները պետք է կատարվեն ինչպես հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված ակնկալվող պահանջների վերջնական արժեքի համար, այնպես էլ այն ակնկալվող պահանջների արժեքի համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏԶՊՊ): Պահանջների վերջնական արժեքը հստակորեն որոշելու համար կարող է զգալի ժամանակ պահանջվել և

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 մարտի 2013թ.



որոշ պայմանագրերի դեպքում, տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջները կազմում են հաշվեկշռի պարտավորությունների մեծ մասը:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Որպես այդպիսին, այս մեթոդներն արտացոլում են վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները: Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի ապահովագրական դասերի: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ Հայաստանի ապահովագրական շուկան համեմատաբար նոր է և անկայուն և գրեթե անհնար է կատարել ապագա գնահատումներ՝ հիմնվելով պատմական տվյալների վրա:

Ընկերությունը գնահատում է ներկայացված պահանջները «դեպք-առ-դեպք» մեթոդով, բացառությամբ ապահովագրության այն դասերի, որտեղ պահանջների՝ հաշվետու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների միջին ամսական քանակը հիսուն և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էականորեն չեն տատանվել: Նման դասերի համար օգտագործվում է «միավոր պահանջի հատուցման միջին չափի» գնահատում:



Ծանոթագրություն 8. «Ձուտ ապահովագրավճարներ»

Ապահովագրության դասեր	Հաշվետու ժամանակաշրջան			Նախորդ հաշվետու ժամանակաշրջան		
	Հաշվեգրված ապահովագրավճարներ	Վերաապահովագրողների փոխանցված ապահովագրավճարներ	Ձուտ հաշվեգրված ապահովագրավճարներ	Հաշվեգրված ապահովագրավճարներ	Վերաապահովագրողների փոխանցված ապահովագրավճարներ	Ձուտ հաշվեգրված ապահովագրավճարներ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	21,832	163	21,669	65,421	2,509	62,912
Առողջության ապահովագրություն	201,337		201,337	2,519,312		2,519,312
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	125,757	34,420	91,337	583,856	172,271	411,585
Օդանավերի ապահովագրություն	56,827	54,017	2,810	1,858	1,232	626
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	28,268	14,546	13,722	93,092	49,573	43,519
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	176,845	112,601	64,244	654,102	308,756	345,346
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	22,105	455	21,650	29,598	1,098	28,500
Օդանավերի օգտագործումից բխող	3,749	3,400	349	9,677	6,510	3,167
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	37,092	24,069	13,023	152,059	129,088	22,971
Վարկերի ապահովագրություն	359,589		359,589	809,691		809,691
Ֆինանսական վնասների ապահովագրություն	89,170	80,135	9,035	201,746	111,941	89,805
Աջակցության ապահովագրություն	17,959	8,122	9,837	85,469	38,058	47,411
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	2,095,605		2,095,605	4,459,540		4,459,540
Ընդամենը	3,236,135	331,928	2,904,207	9,665,421	821,036	8,844,385
Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում	911,630	63,149	848,481	1,611,410	54,458	1,556,952

«Ռուսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
 Ֆինանսական հաշվետվություններ
 31 մարտի 2013թ.



Վաստակած ապահովագրավճարներ	2,055,726	7,287,433
----------------------------	-----------	-----------

Ծանոթագրություն 9. «Եկամուտ տոկոսավճարներից և վարձավճարներից»

Տոկոսավճարի կամ վարձավճարի տեսակը	31/03/13	31/12/12
Միջնորդավճարներ վերաապահովագրողներից	18,256	31,271

Ծանոթագրություն 10. «Ներդրումային եկամուտ»

Ներդրումային եկամտի աղբյուրը	Ներդրումային եկամտի մեծություն	
	31/03/2013	31/12/2012
Տոկոսային եկամուտ բանկերում ներդրված ընթացիկ անադների գծով	82,347	341,826
Տոկոսային եկամուտներ այլ ընթացիկ ներդրումների գծով	1,885	7,900
Տոկոսային եկամուտներ այլ ֆինանսական կազմակերպություններից տրամադրված ընթացիկ փոխառություններից	268	
Ներդրումներից եկամուտ	84,500	349,726
Տոկոսային եկամուտներ ընթացիկ արժեթղթերից	28,570	47,508
վերագնահատումից զուտ եկամուտներ	17,848	10,216
այլ անձանց նկատմամբ այլ ընթացիկ պահանջներից եկամուտներ	0	4,340
Տոկոսային եկամուտներ այլ ֆինանսական կազմակերպություններից տրամադրված ընթացիկ փոխառություններից		281
Ընդամենը՝ զուտ առևտրային եկամուտ	46,419	62,345



Ծանոթագրություն 13 «Ձուտ հատուցումներ»

Ապահովագրության դասեր, որոնց գծով ընկերությունը վճարել է հատուցումներ	Համախառն հատուցումներ				Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	այդ թվում կարգավորման ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
		այդ թվում կարգավորման ծախսեր				
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	-689.0		31,666.0		165.0	
Առողջության ապահովագրություն	456,963.0		1,317,791.0			
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	149,921.0	409.0	529,315.0	1,608.0	66,230.0	233,157.0
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	-34,680.0	172.0	24,770.0	1,350.0	-22,978.0	16,000.0
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	47,685.0	478.0	168,379.0	957.0	63,279.0	100,930.0
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	3,927.0		5,602.0			-1,144.0
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	128.0		63,191.0			60,240.0
Վարկերի ապահովագրություն	-858.0		124,135.0		75.0	0.0
Ֆինանսական վնասների ապահովագրություն	39,218.0		-19,404.0		37,350.0	-22,160.0
Աջակցության ապահովագրություն	1,408.0		15,915.0		1,378.0	13,296.0
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	783,156.0	31,665.0	2,684,810.0	100,857.0		
Ընդամենը	1,446,179.0	32,724.0	4,946,170.0	104,772.0	145,499.0	400,319.0

Ծանոթագրություն 14 «Ֆինանսական ծախսեր»

	Ընթացիկ պարտավորություններ		Ոչ ընթացիկ պարտավորություններ	
	31/03/13թ	31/12/12թ	31/12/12 թ	31/12/11 թ
Ֆինանսական ծախսի մեծությունը	6429	5816		



Ծանոթագրություն 15 «Այլ գործառնական և վարչական ծախսեր»

Այլ գործառնական և վարչական ծախսի աղբյուր	Այլ գործառնական և վարչական ծախսի մեծությունը	
	31/03/13 թ	31/12/12 թ
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	297,778	1,204,437
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	45,438	171,172
Շենքի, սարքավորումների, Փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	18,174	76,013
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	4,752	21,874
Կապի և հաղորդակցության միջոցների գծով ծախսեր	16,747	87,384
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	4,579	5,076
Այլ կառավարչական ծախսեր	31,953	190,212
Գովազդի գծով ծախսեր	54,529	312,638
Ներկայացուցչական ծախսեր	2,570	37,275
Գործուղման ծախսեր	6,777	36,957
Այլ ծախսեր	71,396	255,890
Ընդամենը	554,694	2,398,928

Այլ գործառնական և վարչական ծախսի աղբյուր	Այլ ծախսի մեծությունը	
	31/03/13 թ	31/12/12 թ
Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ	-24861	-61



Ծանոթագրություն 22 «Հիմնական միջոցներ»

Հազար դրամ	Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ ՀՄ	Ընդամենը
------------	----------------	------------------------	--------	----------

ԱՐԺԵՔԸ

Առ 31 դեկտեմբերի 2012թ.	247,956	106,640	116,772	471,367
-------------------------	---------	---------	---------	---------

Մուտքեր	12,798	0	17,282	
----------------	---------------	----------	---------------	--

Առ 31 մարտի 2013թ.	260,754	106,640	134,053	501,447
---------------------------	----------------	----------------	----------------	----------------

Մաշվածություն

Առ 31 դեկտեմբերի 2012թ.	-138,603	-49,288	-42,288	-230,178
-------------------------	----------	---------	---------	----------

Ամորտիզացիայի հաշվեգրում	-15,951	-5,233	-6,430	-27,615
---------------------------------	----------------	---------------	---------------	----------------

Առ 31 մարտի 2013թ.	-154,554	-54,521	-48,718	-257,793
---------------------------	-----------------	----------------	----------------	-----------------

ՄԱՅՈՐՐԱՅԻՆ ԱՐԺԵՔ

Առ 31 դեկտեմբերի 2012թ.	109,353	57,352	74,484	241,189
-------------------------	---------	--------	--------	---------

Առ 31 մարտի 2013թ.	106,200	52,119	85,335	243,654
---------------------------	----------------	---------------	---------------	----------------

2013թ.-ի մարտի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրաետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանապակման ենթակա հիմնական միջոցներ:



Ծանոթագրություն 25 «Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ և ֆինանսական գործիքների հրական արժեքներ»

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կատեգորիաներ	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
«իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	1,031,919	1,031,919	570,501	570,501
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,	42,318	42,318	40,226	40,226
Ավանդներ բանկերում	3,812,908	3,812,908	3,752,781	3,752,781
Փոխառություններ	10,549	10,549	10,281	10,281
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
«իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորություններ (Ռեպո համաձայնագրեր)	640,851	640,851		
ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:				

Ծանոթագրություն 27 «Հարկում»

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված հետաձգված հարկային ակտիվների գումարը՝ ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար.

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան



Հետաձգված հարկային ակտիվ	76,301	76,301
--------------------------	--------	--------

Ծանոթագրություն 28 «Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ»

	Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	
	Հաշվետու ժամանակաշրջան 31/03/13թ	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան 31/12/12թ
Ապահովադիրներից	1,230,524	1,018,165
Հատուցումների կանխավճարային գումարներից	283,316	569,857
Այլ ֆիզիկական և իրավաբանական անձանցից	114,668	103,269
Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ	-48,311	-24,925
Ընդամենը	1,580,197	1,666,366

Ծանոթագրություն 31 «Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորություններ»

Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորության աղբյուր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
	31/03/13թ	31/12/12թ
Չվաստակած ապահովագրավճարների պահուստ	3,855,905	2,944,275
Պահանջների (վնասների) պահուստ	1,438,323	1,674,602

Ծանոթագրություն 33 «Այլ ֆինանսական պարտավորություններ»

Այլ ֆինանսական պարտավորության աղբյուր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
---------------------------------------	------------------------	-------------------------------



Ծանոթագրություն 34

«Կրեդիտորական պարտավորություններ ապահովագրության գծով»

Կրեդիտորական պարտավորություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
	31/03/13	31/12/12
Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	639,600	577,540
Արտաքին կրեդիտորական պարտքեր	103271	159,291
Ընդամենը	742,871	736,830

Ծանոթագրություն 35 «Այլ պարտավորություններ»

Այլ պարտավորության աղբյուր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
	31/03/2013	31/12/2012
Կրեդիտորական պարտքեր հարկերի և տուրքերի գծով	46,951	73,219
Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և այլ վճարներ	2,198	1,349
Այլ պարտավորություններ	138,748	175,110
(Ռեպո համաձայնագրեր)	640,851	0
Ընդամենը	828,749	249,678

Ստացված կանխավճարներ ապահովագրության գծով	84,924	814,803
---	--------	---------



Ծանոթագրություն 36 «Կապիտալ»

Հազար դրամ	31.13.2013		31.12.2012	
	Վճարված կապիտալ	% ընդհանուր վճարված կապիտալից	Վճարված կապիտալ	% ընդհանուր վճարված կապիտալից
Բաժնետիրական կապիտալ				
Ռոսգոսստրախ ՍՊԸ	2,070,000	100	2,070,000	100

Ծանոթագրություն 37 «Ռիսկերի կառավարման հիմունքներ»

Ֆինանսական գործիքներից առաջացող յուրաքանչյուր տեսակի ռիսկի համար անհրաժեշտ է կիրառել ռիսկի ղեկավարման որոշակի մեթոդներ, որոնց շնորհիվ հնարավոր է կանխատեսել իրադարձության ծագման հավանականությունը:

Մինչ ռիսկի ղեկավարման մեթոդի կիրառումը, պետք է տարբերակել ղեկավարման հետևյալ ռազմավարությունը՝

1. Ռիսկից խուսափում: Համաձայն որի՝ ճիշտ լուծումը ռիսկ պարունակող գործունեությունից հրաժարվելն է: Բայց այս ռազմավարությունը չի հանդիսանում խնդրի օպտիմալ լուծման տարբերակ: Արտաքին, հաճախ նաև ներքին, գործոնների անորոշությունը կարող է բերել բավականին բարձր արդյունքների:
2. Ռիսկի ընդունում: Այս ռազմավարությունը ենթադրում է ռիսկի գիտակցված ընդունում և նույնպես չի հանդիսանում խնդրի օպտիմալ լուծման տարբերակ այն պատճառով, որ հնարավոր վերջնական արդյունքը չի կարող համընկնել ծրագրավորողի հետ: Այլ կերպ ասած, որոշումների ընդունման և ղեկավարման կարևորագույն պահերի շտկումը թույլ է տալիս նվազագույնի հասցնել բացասական հետևանքները:



3. Ռիսկի ղեկավարում: Այսինքն, ռիսկի հայտնաբերումն ու գնահատումը, ինչպես նաև միջոցների ձեռնարկումը՝ այն նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Քանի որ շուկայական տնտեսությունների պայմաններում ցանկացած ֆինանսատնտեսական գործունեություն ռիսկային է, իսկ երկրի սոցիալ-տնտեսական փոփոխությունները հնարավոր չէ ամբողջությամբ կանխատեսել ու գործնականում հաշվի առնել, ապա ամեն անգամ անհրաժեշտություն է առաջանում արագ կողմնորոշվելու, որոշում կայացնելու և ընտրելու գործունեության առավել արդյունավետ տարբերակ:

Ռիսկի ղեկավարման խնդիրը չի կարող արդյունավետ լուծվել տարբեր միջոցառումների կիրառմամբ: Այն լուծվում է ռիսկի համալիր ղեկավարման տեխնոլոգիայի ներդրմամբ: Հենց այդ մոտեցումն էլ հանդիսանում է Ըմկերության գործունեության արդյունավետ քաղաքականության և վերլուծության տարր,

Ռիսկի կառավարման գործընթացը ենթադրում է՝

1. նպատակի որոշում, կապիտալի ներդրման ռիսկային տարբերակի որոշում
2. տնտեսական իրավիճակի մասին տեղեկությունների ձեռքբերում
3. ռիսկի աստիճանի որոշում
4. ռիսկային իրավիճակի ի հայտ գալու հնարավորության հավանականության որոշում
5. տվյալ գործարքի ակնկալվելիք շահութաբերության և ռիսկի ցուցանիշների համեմատում
6. ռիսկի կառավարման ռազմավարության և մեթոդների ընտրություն
7. ռիսկի մակարդակի նվազեցման ծրագրերի մշակում, դրանց իրականացման կազմակերպում
8. ծրագրերի կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն
9. որոշման իրականացման արդյունքների գնահատում:



Ծանոթագրություն 38 «Ապահովագրական ռիսկեր»

Նպատակ ունենալով ստեղծել առավել հաշվեկշռված ապահովագրական պորտֆել, ապահովել ապահովագրական գործառույթների շահութաբերությունը և իր ֆինանսական կայունությունը, Ընկերությունը, ընդունելով որոշակի ռիսկեր, դրանց մի մասը կամ ամբողջությամբ համաձայնեցված պայմաններով փոխանցում է վերաապահովագրողների:

Վերաապահովագրության միջոցով Ընկերությունն ապահովում է ապահովագրական գործառույթունների ֆինանսական կայունության, վճարունակության և շահութաբերության անհրաժեշտ մակարդակ: Վերաապահովագրությանը կարելի է վերագրել հետևյալ երկու հիմնական գործառույթներ՝

1. խոշոր ապահովագրական ռիսկեր ապահովագրելու հնարավորության ընձեռում,
2. Ընկերությունների կողմից կնքված ապահովագրության պայմանագրերով ստանձնած ռիսկերի վերաբաշխման հնարավորության ընձեռում՝ այդ պայմանագրերի պորտֆելի ռիսկայնությունը կառավարելու և դիվերսիֆիկացնելու նպատակով:

Ծանոթագրություն 39 «Ֆինանսական ռիսկեր»

Ֆինանսական ռիսկերի խմբի մեջ ներառվում են՝

- ինֆլացիոն և դեֆլացիոն ռիսկեր- սրանք վնասի պատճառ կարող են հանդիսասանալ այն դեպքում, երբ գործարքի իրականացման օգտագործվող արժույթի գնողունակությունը փոփոխվում է
- արտարժույթային ռիսկեր - վնասի հանդես գալը առնչվում է սրանց հետ, եթե գործարքի իրականացումը կատարվում է արտարժույթով, որի գնողունակությունը փոփոխության է ենթարկվել



- իրացվելիության ռիսկեր - սրանք հանդես են գալիս այն դեպքում, երբ կազմակերպության ակտիվների գների մակարդակը կտրուկ փոփոխության է ենթարկվում:

- Ներդրումային ռիսկերը հանդես են գալիս երեք տարատեսակներով՝

1. շահույթի ստացման հնարավորության չօգտագործում – դրա պատճառն այն է, որ միշտ չէ նախօրոք հնարավոր լինում ճշգրիտ գնահատել ակնկալվող շահութաբերության ցուցանիշները, բացի այդ ներդրումների տարբերակներից յուրաքանչյուրն ունենում է շահութաբերության և ռիսկայնության զանազան ցուցանիշներ և միշտ չէ, որ հնարավոր է լինում ճիշտ համադրել դրանք

2. շահութաբերության մակարդակի նվազման ռիսկ: Սա իր հերթին բաժանվում է վարկային և տոկոսային ռիսկեր:

Տոկոսային ռեսկերը հանդես են գալիս կապված այն հանգամանքի հետ, որ ժամանակի ընթացքում կարող է վարկավորման տոկոսը փոփոխվի:

Վարկային ռիսկերը բաժանվում են 3 մասի՝

ա. սելեկցիոն ռիսկ – սա հանդես է գալիս այն դեպքում, երբ ներդրողին չի հաջողվում վարկավորման արդյունավետ պորտֆել ձևավորել

բ. անվճարունակության ռիսկ – սա հանդես է գալիս այն դեպքում, երբ գործարքի իրականացման ժամանակահատվածում մասնակից կողմերի մի մասը անվճարունակ է դառնում և չի կարողանում կատարել իր պարտավորությունները

գ. բորսային ռիսկ – սա հանդես է գալիս այն դեպքում, երբ ձեռնարկությունը մասնակցում է տարաբնույթ բորսային գործարքներին

3. ուղղակի ֆինանսական կորուստներ:



Ֆինանսական ռիսկերի հիմնական պատճառներն են ռեսուրսների սահմանափակվածությունը և տնտեսական իրավիճակի անորոշությունը: Ռիսկերը տարբերվում են ըստ առանձին խմբերի, օրինակ, ըստ ապահովագրության հնարավորության ռիսկերը ստորաբաժանվում են ապահովագրվող և չապահովագրվող ռիսկերի: Ապահովագրվող ռիսկերն ունեն քանակական որոշակիություն և ֆինանսական չափման բնույթ: Չապահովագրվող ռիսկերի շարքին են դասվում ֆորս – մաժորային ռիսկերը, որոնց մակարդակը հնարավոր չէ գնահատել:

Ծանոթագրություն 40 «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Պայմանական պարտավորություններ	2,220,000	2,112,000

Պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են գործակալների մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար ընկերության ստանձնած պարտավորությունները (համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 90-ի):



Ծանոթագրություն 41

«Բազահայտումներ փոխկապակցված անձանց հետ կապված»

Ընկերությունը կապակցված կողմերի հետ իր գործունեության ընթացքում ներգրավված է եղել հետևյալ գործարքում՝

ՀՀ դրամ

Ապահովագրության դասը	Ապահովագրության վկայագիր	Ապահովագրության ժամկետը	Ապահովագրական գումարը/դրամ/	Ապահովագրվածը	ապահովագրական սակագինը
Աջակցության ապահովագրություն	TI001184	22/04/09 – 21/10/09	14,833,200	6,000	0.08%
Աջակցության ապահովագրություն	TI001185	22/10/09 – 21/04/10	16,266,900	6,000	0.07%
Աջակցության ապահովագրություն	TI003118	14/10/09 – 13/10/10	16,266,900	15,000	0.09%
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	MI003547	16/12/09-15/12/10	9,000,000	166,500	1.85%
Ցամաքային տրանսպորտի պատահանաստվության ապահովագր.	MI003547	16/12/09-15/12/10	3,500,000	30,000	0.86%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI000025	26/03/09 – 25/03/10	35,000,000	35 000	0.10%
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	PA000007	26/03/09 – 25/03/10	9,600,000	9600	0.10%
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	MI003547	16/12/09-15/12/10	15,000,000	15,000	0.10%
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	MI006837	22/12/10-21/12/11	8,100,000	145,000	1.79%

«Ռուսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
 Ֆինանսական հաշվետվություններ
 31 մարտի 2013թ.



Ցամաքային տրանս.բխող պատասխանատվության ապահովագր.	MI006837	22/12/10-21/12/11	5,000,000	5,000 դրամ	0.10%
Առողջության ապահովագրություն	HI000099	01/05/10-30/04/11	4,000,000	48,750	1.22%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI001337	29/06/10-28/06/11	500,000USD	206,250	0.12%
Առողջության ապահովագրություն	HI000148	01/06/10-31/05/11	4,000,000	48,750	1.22%
Առողջության ապահովագրություն	HI000141	01/06/10-31/05/11	4,000,000	48,750	1.22%
Առողջության ապահովագրություն	HI000144	01/06/10-31/05/11	4,000,000	48,750	1.22%
Առողջության ապահովագրություն	HI000155	01/06/10-31/05/11	4,000,000	48,750	1.22%
Առողջության ապահովագրություն	HI000159	01/06/10-31/05/11	4,000,000	48,750	1.22%
Աջակցության ապահովագրություն	TI011447	20/12/10 – 19/12/11	14,434,800	12,500	0.08%
Աջակցության ապահովագրություն	TI011430	08/12/10 – 07/12/11	14,434,800	12,500	0.08%
Աջակցության ապահովագրություն	TI009532	01/11/10 – 31/10/11	14,434,800	12,500	0.08%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI003458	18/01/11-17/01/12	40,000,000	40,000	0.10%
Աջակցության ապահովագրություն	TI013773	12/05/11-11/05/12	16,027,800	12,500	0.08%
Ցամաքային տրանսպորտի	MI009039	15/01/11-14/01/12	1,450,000	27,000	1.86%

«Ռուսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
 Ֆինանսական հաշվետվություններ
 31 մարտի 2013թ.



ապահովագրություն					
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	MI009039	15/01/11-14/01/12	7,500,000	6,500	0.09%
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	MI007027	22/06/11-21/06/12	8,150,000	203,750	2.49%
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	MI007027	22/06/11-21/06/12	2,000,000	3,500	0.17%
Աջակցության ապահովագրություն	TI014814	07/07/11 – 13/07/11	45,334,800	14,600	1.07%
Աջակցության ապահովագրություն	TI014815	07/07/11 – 13/07/11	30,223,200	7,300	0.80%
Աջակցության ապահովագրություն	TI015590	06/08/11 – 20/08/11	15,111,600	3,500	0.56%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI005409	01/07/11-30/06/12	167,422,500	165,990	0.10%
Աջակցության ապահովագրություն	TI016327	17/08/11 – 31/08/11	30,223,200	7,000	0.56%
Աջակցության ապահովագրություն	TI016328	17/08/11 – 31/08/11	30,223,200	7,000	0.56%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI006281	21/01/12-20/01/13	40,000,000	40,000 դրամ	0.10%
Աջակցության ապահովագրություն	TI020937	30/05/12-14/06/12	15,300,000	5,640.00	0.18%
Աջակցության ապահովագրություն	TI022379	01/06/12-31/05/13	15,300,000	12,500	0.41%
Աջակցության ապահովագրություն	TI026550	25/06/12-02/07/12	15,300,000	2,860	0.09%

«Ռուսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
 Ֆինանսական հաշվետվություններ
 31 մարտի 2013թ.



Աջակցության ապահովագրություն	TI025426	25/06/12-02/07/12	30,600,000	5,720	0.09%
Աջակցության ապահովագրություն	TI039964	14/08/12-13/08/13	15,300,000	12,500	0.08%
Աջակցության ապահովագրություն	TI039965	14/08/12-13/08/13	15,300,000	12,500	0.08%
Աջակցության ապահովագրություն	TI039966	14/08/12-13/08/13	15,300,000	12,500	0.08%
Աջակցության ապահովագրություն	TI038033	07/08/12-17/08/12	30,600,000	7,500	0.024%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI007711	01/07/12-30/06/13	175,500,000	187,930	0.001%
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	MI010979	21/08/12-20/08/13	8,000,000	7,500	0.9%
Առողջության ապահովագրություն	HI001083	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%
Առողջության ապահովագրություն	HI001084	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%
Առողջության ապահովագրություն	HI001107	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%
Առողջության ապահովագրություն	HI001121	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%
Առողջության ապահովագրություն	HI001132	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%
Առողջության ապահովագրություն	HI001134	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%
Առողջության ապահովագրություն	HI001146	01/11/12-31/10/13	4,000,000	49,000	1,22%

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ
 Ֆինանսական հաշվետվություններ
 31 մարտի 2013թ.



Աջակցության ապահովագրություն	TI027345	20/10/12-19/10/13	16,182,600	14,000	0,08%
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	PI007998	01/10/12-30/09/13	13,130,000	23,630	0,17%
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	MI011501	21/10/12-20/10/13	4,225,000	59,130	1,39%
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	VL500111	01/01/13-31/12/13	21,000,000	5,000	0.02%
Աջակցության ապահովագրություն	TI027798	03/01/13-09/01/13	16,339,200	2,510	0,08%
Աջակցության ապահովագրություն	TI027799	03/01/13-09/01/13	16,339,200	2,510	0,08%

համապատասխանում է Ընկերության գործարար ծրագրով հաստատված սակագնին:

Փոխկապակցված անձանց հետ գործարքներից չմարված մնացորդներ չկան:

Ղեկավար անձնակազմին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կազմել են՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	51,725	173,709
Սոցապ հատկացումներ		10,362

Ապահովագրական ընկերության
 Գործադիր տնօրեն՝

Գագիկ Գրիգորյան _____

Գլխավոր հաշվապահ՝

Արմինե Զաքարյան _____

Կ.Տ.